Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 90-Ա որոշման

«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ԽՄԲԱՅԻՆ ՏՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նկարագիրը	«Ջերմիկ անկյուն» խմբային տների ծրագրի նպատակն է՝ միայնակ, խնամքի կարիք ունեցող մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կենսապահովման նվազագույն պայմանների և կացարանի ապահովումը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամ
4.	Ծրագրի կատարողը	Ծրագիրն իրականացվում է «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից Հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն, ՀՎՀՀ՝ 01242562
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվում է հետևյալ հասցեներում՝ • Երևանի Աջափնյակ վարչական շրջան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն, • ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Առինջ, 20 փ., 6 տուն, • ՀՀ Արարատի մարզ, գյուղ Գեղանիստ, 27 փող., 23/1 տուն: Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 4 790 105 (չորս միլիոն յոթ հարյուր իննսուն հազար հարյուր հինգ) դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

7.	Բարեգործություն ստացողը	1. «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն հասցեում, բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրներն ավարտած, մտավոր հաշմանդամություն ունեցող միայնակ անձինք: Ներկայումս խմբային տանը բնակվում են 16 երիտասարդներ (7 տղամարդ և 9 կին), ովքեր տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3, Փարաքարի թիվ 2 հատուկ կրթահամալիրներից, Գավառի մանկատնից: 2. «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է ՀՀ Կոտայքի մարզի գյուղ Առինջ, 20 փող., 6 տուն հասցեում, բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրներն ավարտած, մտավոր հաշմանդամություն ունեցող միայնակ անձինք: Ներկայումս խմբային տանը բնակվում են 8 երիտասարդներ (4 տղամարդ և 4 կին), ովքեր տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրից: 3. «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է ՀՀ Արարատի մարզի գյուղ Գեղանիստ, 27 փող., 23/1 տուն հասցեում, բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրներն ավարտած, մտավոր հաշմանդամություն ունեցող միայնակ անձինք: Ներկայումս խմբային տանը բնակվում են 8 երիտասարդներ (8 կին), 7-ը տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրից, 1-ը Արցախի Հադրութ համայնքից՝ փախստականի կարգավիճակով: +
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի իրականացման ժամկետն է՝ 5 փետրվարի 2023 թ.-31 դեկտեմբերի 2023 թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն հասցեում, գործունեության ընթացքում կատարվում են կոմունալ վճարումներ, որի տասնմեկ ամսվա հաշվարկը կազմում է 1 773 629 (մեկ

		միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր քսանինը) դրամ (առանց ԱԱՀ-ի), որից գազ՝ 1 098 107 դրամ, ջրամատակարարում և ջրահեռացում՝ 168 980 դրամ, էլեկտրաէներգիա՝ 443 300 դրամ, հեռախոսակապ՝ 44 000 դրամ, գազի սպասարկում՝ 19 242 դրամ: Ծրագրի շրջանակներում միջոցառումները նախատեսվում է իրականացնել 05.02.2023-31.12.2023 թթ. ընկած ժամանակահատվածի ընթացքում: «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է ՀՀ Կոտայքի մարզի գյուղ Առինջ, 20 փող., 6 տուն հասցեում, գործունեության ընթացքում կատարվում են կոմունալ վճարումներ, որի տասնմեկ ամսվա հաշվարկը կազմում է 1 434 025 (մեկ միլիոն չորս հարյուր երեսունչորս հազար քսանհինգ) դրամ (առանց ԱԱՀ-ի), որից գազ՝ 987 938 դրամ, ջրամատակարարում և ջրահեռացում՝ 130 640 դրամ, էլեկտրաէներգիա՝ 296 205 դրամ, գազի սպասարկում՝ 19 242 դրամ: Ծրագրի շրջանակներում միջոցառումները նախատեսվում է իրականացնել 05.02.2023-31.12.2023 թթ. ընկած ժամանակահատվածի ընթացքում: «Ջերմիկ անկյուն» խմբային տան, որը գործում է ՀՀ Արարատի մարզի գյուղ Գեղանիստ, 27 փող., 23/1 տուն հասցեում, գործունեության ընթացքում կատարվում են կոմունալ վճարումներ, որի տասնմեկ ամսվա հաշվարկը կազմում է 1 582 451 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր հիսունմեկ) դրամ (առանց ԱԱՀ-ի), որից գազ՝ 987 938 դրամ, էլեկտրաէներգիա՝ 443 300 դրամ, ջրամատակարարում և ջրահեռացում՝ 130 640 դրամ, գազի սպասարկում՝ 20 573 դրամ: Ծրագրի շրջանակներում միջոցառումները նախատեսվում է իրականացնել 05.02.2023-31.12.2023 թթ. ընկած ժամանակահատվածի ընթացքում:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսված գինը	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ակնկալվում է հարկային արտոնություն ստանալ հետևյալ գործարքների մասով՝ 1) Պայմանագիր կնքված գազի մատակարարման (07.07.2013 թ.-անժամկետ), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 9170 խ/մ (1 098 107 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), էլեկտրաէներգիայի մատակարարման (07.06.2021 թ.- անժամկետ), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 11 000 կվտ/ժ (443 300 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), հեռախոսակապի մատակարարման (20.02.2009 թ.-անժամկետ), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 44 000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի, ջրի մատակարարման և ջրահեռացման (25.11.2017 թ.-անժամկետ), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 1190խ/մ (168 980 դրամ՝ առանց ԱԱՀ-ի) և գազի սպասարկման (07.10.2021 թ.-3 տարի ժամկետով), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 19,242 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: 2) Պայմանագիր կնքված գազի մատակարարման (21.06.2018 թ.-անժամկետ), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 8 250 խ/մ (987 938 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), էլեկտրաէներգիայի մատակարարման (28.06.2018 թ.- անժամկետ), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 7350 կվտ/ժ (296 205 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), ջրի մատակարարման և ջրահեռացման (10.12.2018 թ.-անժամկետ), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 920 խ/մ (130 640 դրամ՝ առանց ԱԱՀ-ի) և գազի սպասարկման (26.10.2021 թ.-3 տարի ժամկետով), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 19 242 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: 3) Պայմանագիր կնքված էլեկտրաէներգիայի մատակարարման (26.06.2020 թ.- անժամկետ), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 11 000 կվտ/ժ (443 300 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), գազի մատակարարման (21.06.2021 թ.-անժամկետ), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 8250 խ/մ (987 938 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), ջրի մատակարարման և ջրահեռացման (18.11.2020 թ.-անժամկետ),

		որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 920 խ/մ (130 640 դրամ՝ առանց ԱԱՀ-ի) և գազի սպասարկման (02.06.2021 թ.-3 տարի ժամկետով), որի տասնմեկ ամսվա ծախսը կազմում է 20 573 դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Երևանի քաղաքապետարանի, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի, ՀՀ Արարատի մարզպետարանի, ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Գեղանիստ բնակավայրի, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև նախատեսվում է համագործակցություն միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ՝ շահառուների ընտրության շրջանակներում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Ջերմիկ անկյուն» հիմնադրամը պարբերաբար և նաև իրենց պահանջով հաշվետվություն է ներկայացնում բարեգործին, իրականացնում է անկախ աուդիտորական վերահսկողություն: • ՀՀ կառավարության 2003 թ.-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազոր մարմին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

08.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ